ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ը ստորև՝ներկայացնում է իր կարիքների համար «պլաստմասե տարայի և պիտակների» ձեռքբերման նպատակով կազմակերպված N«ՀԱՅԿԵՆՍ-ԳՀԱՊՁԲ-19/52» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի 13 սեպտեմբերին կնքված N«ՀԱՅԿԵՆՍ-19/52-1» պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 06-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ում գործող «Դեղապատրաստուկների արտադրամասի» գործունեության դադարեցում:

Փոփոխության նկարագրություն՝

1. Պայմանագրի 8.5 կետին համապատասխան Կողմերը որոշեցին գնման պահանջի բացակայությամբ պայմանավորված կատարել վերոնշյալ պայմանագրի մասնակի լուծարում:
2. Թվով 120000 հատ պիտակների քանակությունը նվազեցնել և հաստատել թվով 18000 հատ պիտակի մատակարարում:

Փոփոխության հիմնավորում՝

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ-ում գործող «Դեղապատրաստուկների արտադրամասի» գործունեության դադարեցում:

Պայմանագրի 8.5 կետ:

Պատվիրատու՝ **ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ ՊՈԱԿ**

Համաձայնագիր-1

13.09.2019թ. կնքված N ՀԱՅԿԵՆՍ- 19/52-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «06» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ ԳԱԱ <Հայկենսատեխնոլոգիա> ԳԱԿ ՊՈԱԿ-ը այսուհետ՝ «Գնորդ», ի դեմս տնօրեն Ա. Սաղյանի մի կողմից, և «Յունիպրինտ» ՍՊԸ -ն, այսուհետ՝ «Վաճառող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Տ. Դիլաջյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 13.09.2019թ. կնքված N ՀԱՅԿԵՆՍ -19/52-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 8.5 կետին համապատասխան, գնման պահանջի բացակայությամբ պայմանավորված Կողմերը որոշեցին կատարել վերոնշյալ պայմանագրի մասնակի լուծարում:

2 Թվով 120000 հատ պիտակների քանակությունը նվազեցնել և հաստատել թվով 18000 հատ պիտակի մատակարարում:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գնորդ	Վաճառող
ՀՀ ԳԱԱ<Հայկենսատեխնոլոգիա> ԳԱԿ ՊՈԱԿ	«Յունիպրինտ» ՍՊԸ
ՀՀ. ք.Երևան, Գյուրջյան 14	ՀՀ, ք. Երևան, Լեոյի 7
<ՀայբիզնեսԲանկ> ՓԲԸ	<ԱրարատԲանկ> ԲԲԸ
Հ/Հ 11500769896800	Հ/Հ 1510032087830200
ՀՎՀՀ 00871944	ՀՎՀՀ 02540716
Տնօրեն՝ Ա.Սաղյան	Տնօրեն՝ Տ. Դիլաջյան
_____ /ստորագրություն/ Կ.Տ.	_____ /ստորագրություն/ Կ.Տ.